ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ

№ 419-Ա/2 « 10 » մայիսի 2016թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի (աղյուսակ N 22-2) 01.05.01 «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագրի «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարների տրամադրում» մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի N 891-Ա/Ք հրամանի 2-րդ կետով հաստատված հավելված N 2-ի 1.3 կետը, ինչպես նաև 3-րդ կետով ձևավորված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգող մասնագիտական փորձագիտական խորհրդի եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարների տրամադրման մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված 31 (երեսունմեկ) գիտական թեմաների ղեկավարների ցուցակը

(այսուհետ՝ ցուցակ) և հատկացման չափը՝ ըստ «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ», «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ՝ Սամվել Հարությունյանին՝

1) ապահովել ցուցակում ներառված 25 (քսանհինգ) բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին հավելավճարների տրամադրումը՝ սկսած 2016 թվականի մայիսի 1-ից՝ մեկ տարի ժամկետով.

2) տրամադրել ցուցակում ներառված մյուս 6 (վեց) բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների տվյալները Հայաստանի Հանրապետության Նախագահի հովանու ներքո իրականացվող Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի միջոցով հավելավճար տրամադրելու նպատակով:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ՝ Սամվել Հարությունյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ